

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«05» նոյեմբեր 2020թ.

No 3900 - Լ

«ՅՈՒՆԻՏ (ԴԵԼԻԿԱՏ)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «ՅՈՒՆԻՏ (ԴԵԼԻԿԱՏ)» ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

«ՅՈՒՆԻՏ (ԴԵԼԻԿԱՏ)» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Յունիտ (դելիկատ)» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է անգույնից մինչև բաց դեղին գույնի, սպիրտի բնորոշ հոտով, բուրանյութի հոտով կամ առանց բուրանյութի հոտի, գործածության համար պատրաստի թափանցիկ հեղուկ: Որպես ազդող նյութ պարունակում է օկտենիդինի դիհիդրոքլորիդ՝ 0,1%; 2-ֆենօկսիէթանոլ՝ 2,0%, ինչպես նաև ֆունկցիոնալ բաղադրիչներ և բաղադրիչներ՝ նախատեսված ձեռքերի խնամքի համար: Միջոցի pH-6.5±1,0:

2. Միջոցը թողարկվում է.

1) Պոլիմերային սրվակներում՝ ցողման համար նախատեսված ամուր պտտվող գլխիկով՝ ցողացրման համար ծայրադիրներով կամ ամուր պտտվող կափարիչներով, 0,05-ից մինչև 1 դմ³ ծավալով:

2) 2-ից մինչև 200 դմ³ ծավալով պտտվող կափարիչներով պոլիմերային տարաներով:

3) Անհատական հերմետիկ բազմաշերտ փաթեթավորումով՝ ոչ գործվածքային նյութից, մեկ անձեռոցիկի վրա 1-10 գ միջոցի հաշվարկով, տարբեր չափսերի՝ 30×30 մմ-ից մինչև 300×300 մմ: Անհատական փաթեթավորմամբ անձեռոցիկները թողարկվում են՝

ա. ոչ գործվածքային նյութից անձեռոցիկ, 80×60¹ մմ չափսի, 40-60 գ/մ³ խտության, մեկ անձեռոցիկի վրա 1±0,1 գ ներծծված միջոց,

բ. ոչ գործվածքային նյութից անձեռոցիկ, 80×80¹ մմ չափսի, 40-60 գ/մ³ խտության, մեկ անձեռոցիկի վրա 1±0,1 գ ներծծված միջոց,

գ. ոչ գործվածքային նյութից անձեռոցիկ, 150×120¹ մմ չափսի, 40-60 գ/մ³ խտության, մեկ անձեռոցիկի վրա 5±0,5 գ ներծծված միջոց,

դ. ոչ գործվածքային նյութից անձեռոցիկ, 200×200¹ մմ չափսի, 40-60 գ/մ³ խտության, մեկ անձեռոցիկի վրա 10±1,0 գ ներծծված միջոց:

Ոչ գործվածքային անձեռոցիկների չափսերը փոխվում են՝ պահպանելով ներծծված միջոցի քանակը: Կիրառելի են նաև 1,0 և 1,1 գ քաշով՝ 30-100 մմ, 5 գ քաշով՝ 30-200 մմ, 10 գ քաշով՝ 100-300 մմ չափսերով անձեռոցիկները:

4) Խմբային հերմետիկ փաթեթավորումով՝ ոչ գործվածքային նյութից անձեռոցիկների ձևով՝ մեկ անձեռոցիկի վրա 5-10 գ միջոցի հաշվարկով, 40-60 գ/մ³ խտության, տարբեր չափսերի՝ 100×100 մմ-ից մինչև 300×300 մմ:

5) Պոլիմերային նյութից փաթեթում՝ 5-100 հատ, որն ունի մեկ անձեռոցիկ քաշելու համար փական:

6) 5-200 հատ անձեռոցիկների փաթեթ՝ անցքով, հերմետիկություն ապահովող փաթեթավորմամբ, կափարիչով՝ մեկական անձեռոցիկների դուրս բերման նպատակով:

3. Միջոցի պիտանելիության ժամկետը գործարանային փաթեթավորմամբ՝ 5 տարի է՝ տարայի հերմետիկությունը և միջոցի պահման պայմանները պահպանելու դեպքում:

4. Անձեռոցիկների պիտանելիության ժամկետը խմբային փաթեթավորման դեպքում բացվելուց հետո 30 օր է՝ սենյակային ջերմաստիճանում, ամուր փակվող փաթեթավորման պայմաններում:

5. Միջոցի կենսաբանական ակտիվությունը՝ միջոցն օժտված է հակամանրէային ազդեցությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների, այդ թվում ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, տուբերկուլոզի հարուցչի (թեստավորված է *Mycobacterium terrae*-յի վրա) նկատմամբ, օժտված է նաև վիրուսասպան ակտիվությամբ (մարդու համար հայտնի բոլոր տեսակի հայտնի վիրուս-ախտածինների նկատմամբ, այդ թվում ընդերային և արտաընդերային հեպատիտների հարուցիչների՝ ներառյալ հեպատիտ Ա, Բ և Ց), ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի), սնկասպան հատկությամբ: Երկարատև հակամանրէային ազդեցությունը՝ 3 ժամ է:

6. Թունաբանական ցուցանիշներ՝ միջոցն ըստ սուր թունավորության չափանիշների, ԳՕՍՏ 12.1.007-76-ին համապատասխան, ստամոքսի մեջ ներմուծելիս և մաշկի վրա ներգործությամբ պատկանում է քիչ վտանգավոր նյութերի 4-րդ դասին,

որովայնի խոռոչ ներմուծելիս՝ գործնականում ոչ թունավոր նյութ է՝ 5-րդ դաս: Առաջարկվող ռեժիմներով կիրառելիս տեղային գրգռող, մաշկի ռեզորբտիվ և սենսիբիլիզացնող ազդեցությունն արտահայտված չէ: Միջոցն օժտված է աչքի լորձաթաղանթի վրա չափավոր գրգռող ազդեցությամբ, ներշնչական (ինհալյացիոն) ազդեցության ժամանակ միջոցի գոլորշիները քիչ վտանգավոր են, ըստ սուր թունավորության չափանիշների՝ 4-րդ դաս (շփման եղանակ կիրառելիս): Միջոցի կիրառման անվտանգությունը հսկվում է ցնդող բաղադրիչով՝ 2-ֆենօքսիէթանոլով:

7. Սահմանային թույլատրելի խտությունը (ՄԹԽ) աշխատանքային գոտու օդում՝ ֆենօքսիէթանոլ-2-ի համար՝ 2-10 մգ/մ³ է, վտանգավորության 3-րդ դաս, օկտենիդինի դիհիդրոքլորիդի համար՝ 1 մգ/մ³, 2 դասի վտանգավորություն (աէրոզոլ):

2. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ

8. Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն)՝ հիվանդանոց, պոլիկլինիկա, առողջարան, վերականգնողական կենտրոն, ցերեկային ստացիոնար, բուժսանմաս և բուժկետ, ծերանոց և հաշմանդամների տուն-ինտերնատ, բժշկական և բժշկամանկաբարձական կետ, դիսպանսեր, հոսպիտալ, ատամնաբուժական կաբինետ, ծննդաբերական ստացիոնար, նորածինների պալատ, ինտենսիվ թերապիայի և վերակենդանացման բաժանմունք, վնասվածքաբանության, այրվածքաբանության բաժանմունք, օրգանների փոխպատվաստման կենտրոն, արյան փոխներարկման կենտրոն և շտապ օգնության կայան), կլինիկական, մանրէաբանական, իմունաբանական, ՊՇՌ և լաբորատորիաներում, մանկական և հանրակրթական կազմակերպություններում, մշակույթի և սպորտի կազմակերպություններում, քիմիկա-դեղագործական և օժանելիքակոսմետիկական արտադրության կազմակերպություններում, հանգստյան տներ, արդյունաբերական և հանրային սննդի կազմակերպություններում, բնակչության սպասարկման ոլորտի կազմակերպություններում, ինչպես նաև ազգաբնակչության կողմից՝ կենցաղում օգտագործելու համար:

9. Միջոցը գործածման համար պիտանի լուծույթ է, չի նոսրացվում և չի ակտիվացվում:

10. Միջոցը, պատրաստի հեղուկի ձևով որպես մաշկային հակասեպտիկ, կիրառվում է հետևյալ նպատակով.

ա) բժշկական անձնակազմի և լաբորատորիաների աշխատակիցների, այդ թվում նաև զգայուն և բորբոքվելու հակված ձեռքերի հիգիենիկ մշակում,

բ) վիրաբույժների, վիրահատարանի բուժքույրերի, մանկաբարձների, վիրահատության, ծննդաբերության մասնակցող այլ անձանց ձեռքերի մշակում,

գ) երեխաների (առանց տարիքային սահմանափակման) ձեռքերի հիգիենիկ մշակում,

դ) մաշկային ծածկույթների՝ ցանկացած մաշկի, այդ թվում նաև նորածինների, տարեցների, գրգռման հակված և անկողնային հիվանդների մաշկի մաքրման և սանիտարական մշակման համար,

ե) բժշկական կազմակերպություններում պացիենտի վիրահատական և ներարկման դաշտի մաշկի մշակում,

զ) դոնորների արմնկափոսերի մաշկի մշակում

է) մաշկի մշակում՝ կաթետերների տեղադրումից և հոդերի պունկցիայից առաջ, (առանց տարիքային սահմանափակման, ներառյալ նորածիններ):

ը) բժշկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների անձնակազմի կողմից օգտագործված բժշկական ձեռնոցների (լատեքսից, նեոպրենից, նիտրիլից և սպիրտի նկատմամբ կայունություն ունեցող այլ նյութերից) մշակում, արյան կամ այլ արտազատուկներով աղտոտված ձեռնոցների մշակում՝ ձեռնոցների հանման ընթացքում ձեռքերի աղտոտումից խուսափելու նպատակով, ինչպես նաև մանրէազերծ արտադրատեսակներ թողարկող արտադրությունում, որտեղ պահանջվում է պահպանել ասեպտիկ պայմաններ, աշխատողների ձեռնոցների մշակում:

թ) ոտնաթաթերի կանխարգելիչ մշակում:

11. Միջոցը, որպես մաշկային հակասեպտիկ, անհատական փաթեթավորմամբ անձեռոցիկների ձևով, կիրառվում է հետևյալ նպատակով.

ա) բժշկական անձնակազմի, այդ թվում նաև զգայուն և բորբոքվելու հակված ձեռքերի հիգիենիկ մշակում,

բ) երեխաների (առանց տարիքային սահմանափակման) ձեռքերի հիգիենիկ մշակում,

գ) պացիենտի (առանց տարիքային սահմանափակման, ներառյալ նորածիններ) վիրահատական և ներարկման դաշտի մաշկի, դոնորների արմնկափոսերի մաշկի մշակում,

դ) ներարկման դաշտի, այդ թվում պատվաստումից, կաթետերների տեղադրումից և հոդերի պունկցիայից առաջ (առանց տարիքային սահմանափակման, ներառյալ նորածիններ):

ե) մաշկային ծածկույթների՝ ցանկացած մաշկի, այդ թվում նաև նորածինների, տարեցների, գրգռման հակված և անկողնային հիվանդների մաշկի մաքրման և սանիտարական մշակման համար,

զ) ոտնաթաթերի կանխարգելիչ մշակում:

12. Միջոցը, որպես հակասեպտիկ, խմբային փաթեթավորմամբ անձեռոցիկների ձևով, կիրառվում է հետևյալ նպատակով.

ա) ձեռքերի հիգիենիկ մշակում,

բ) ոտնաթաթերի կանխարգելիչ մշակում:

13. Միջոցը կիրառման համար պատրաստի լուծույթի և անձեռոցիկների տեսքով կիրառվում է հրատապ ախտահանման նպատակով, շփման և ոռոգման եղանակներով, կիրառվում է հետևյալ օբյեկտների մշակման համար՝

1) սենքերում ոչ մեծ մակերեսներ (բազրիք, դռան բռնակ և այլն), կահավորանքի պարագաներ, կոշտ և փափուկ կահույք (բժշկական սեղաններ՝ ծնարանի, բարուրման, վիրահատական, միջամտությունների, սեկցիոն, մերսման) գինեկոլոգիական բազկաթոռ, անվասայլակ, պատգարակ, մահճակալ, վերակենդանացման ներքնակ, ատամնաբուժական աթոռ),

2) բժշկական սարքերի և սարքավորումների մակերեսներ

3) օպտիկական սարքեր և սարքավորումներ, որոնք թույլատրված են արտադրողի կողմից սպիրտային միջոցներով ախտահանման համար;

4) ատամնաբուժական սարքավորումներ (արտաքին մակերեսներ, լարեր, փողրակներ);

5) սրվակների կափարիչների մշակում ներարկումից առաջ

6) հիվանդի խնամքի պարագաներ

- 7) սանիտարատեխնիկական սարքավորումների առանձին մասեր (փողրակ, ծորակ, խառնիչ)
 - 8) սոլյարիների խցիկներ, ուլտրամանուշակագույն լամպեր;
 - 9) մանրէասպան լամպեր և լուսավորման այլ սարքեր;
 - 10) ռետինե և պոլիպրոպիլենային գորգեր, սպորտային գույք;
 - 11) կոշիկներ սնկային հիվանդությունների կանխարգելման համար;
 - 12) գրասենյակային սարքավորումներ (հեռախոս, ստեղնաշար, մոնիտոր և այլն):
14. Միջոցը կենցաղում կիրառվող հակասեպտիկ մակնշմանը համապատասխան կիրառվում է նաև բնակչության կողմից օգտագործման համար՝ ձեռքերի հիգիենիկ մշակման, ներարկման դաշտի, ոտնաթաթի կանխարգելիչ մշակման, ոչ մեծ տարածքների անհետաձգելի ախտահանման, ներարկումից առաջ սրվակի և ֆլակոնի կափարիչի մշակման համար:

3. ՄԻՋՈՑՈՎ ՏԱՐԲԵՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Ձեռքերի հիգիենիկ մշակում՝ ձեռքերի չոր դաստակների վրա (առանց օճառով ու ջրով նախապես լվանալու) լցվում է 3 մլ միջոց և շփվում է մաշկին 30 վայրկյանից ոչ պակաս տևողությամբ՝ մինչև մաշկի ծածկույթի լրիվ չորանալը՝ հատուկ ուշադրություն դարձնելով եղնգափոսերի և միջմատային տարածությունների վրա: Կենսաբանական հեղուկներով, այդ թվում արյունով խիստ աղտոտված ձեռքերը մաքրում են միջոցով ներծծված բամբակյա անձեռոցիկով կամ խծուծով, որից հետո ձեռքերը լվանում են հոսող ջրով և օճառով: Այնուհետև ձեռքերի դաստակներին լցնում են 3 մլ միջոց և քսում՝ մինչև ամբողջությամբ չորանալը, առնվազն 30 վայրկյան:
16. Վիրաբույժների, վիրահատարանի բուժքույրերի, մանկաբարձների, վիրահատության, ծննդաբերության մասնակցող այլ անձանց ձեռքերի մշակում՝ միջոցի կիրառումից առաջ ձեռքերի դաստակն ու նախաբազուկը նախապես մանրակրկիտ լվանում են հոսող տաք ջրով և օճառով՝ 2 րոպե տևողությամբ, որից հետո չորացնում են մանրէազերծ թանգիֆե անձեռոցիկով: Ապա ձեռքերի դաստակի վրա կրկնակի

ավելացվում է 5 մլ-ական միջոց, շփում դաստակի և նախաբազկի մաշկին մինչև միջոցի լրիվ չորացումը՝ պահելով ձեռքերը խոնավ վիճակում առնվազն 2,5 րոպե տևողությամբ, մշակման ընդհանուր տևողությունը 5 րոպե է: Մաշկի ոչ բավարար խոնավության դեպքում ավելացվում է լրացուցիչ միջոց: Մանրէազերծ ձեռնոցներ հագնում են ձեռքերի լրիվ չորանալուց հետո:

17. Դոնորների արմնկափոսերի մշակում կաթետերիզացիայից և հոդերի պունկցիայից առաջ՝ մաշկը կրկնակի սրբվում է միջոցի առատ քանակությամբ թրջված մանրէազերծ թանգիֆե խծուծների միջոցով: Մշակման ավարտից հետո ազդեցության պահաժամը 2 րոպե է: Վիրահատության նախօրեին պացիենտը ցնցուղ (լոգանք) է ընդունում, փոխում է ներքնաշորերը:

18. Ներարկման, այդ թվում պատվաստման և այլ միջամտություններից առաջ մաշկի ամբողջականության խախտման հետ կապված դաշտի մշակում՝ մաշկը սրբվում է միջոցի առատ քանակությամբ թրջված մանրէազերծ բամբակե խծուծով: Մշակման ավարտից հետո ազդեցության պահաժամը 1 րոպե է: Ներարկման դաշտը ոռոգում են մինչև լրիվ խոնավեցումը՝ հետագա 1 րոպե պահաժամով:

19. Բուժանձնակազմի կողմից օգտագործված ձեռնոցների մշակում՝ ձեռնոցների արտաքին մակերեսը մանրակրկիտ սրբվում է մանրէազերծ բամբակե կամ թանգիֆե խծուծով՝ թրջված միջոցի առատ քանակությամբ (միջոցի ծախսի նորման 3 մլ մեկ խծուծի համար), մշակման տևողությունն առնվազն 1 րոպե է (մինչև ձեռնոցի մակերեսի լրիվ չորացումը) մանրէային (բացի տուբերկուլոզից) վարակների դեպքում և առնվազն 5 րոպե՝ տուբերկուլոզի և վիրուսային վարակների դեպքում: Արյամբ և այլ արտազատուկներով ձեռնոցների աղտոտման դեպքում, ձեռքերի հետ դրանց շփումը հանման ընթացքում բացառելու նպատակով, մշակումը իրականացվում է երկու փուլով: Առաջին փուլում միջոցի առատ քանակությամբ թրջված բամբակե կամ թանգիֆե խծուծով ձեռնոցի մակերեսից հեռացվում է տեսանելի աղտոտվածությունը, ապա իրականացվում է համապատասխան ռեժիմով մշակում: Մշակումից հետո ձեռնոցները հանվում են ձեռքերից, ընկղմվում այդ նպատակի համար նախատեսված ախտահանիչ միջոցի մեջ և ուղարկվում օգտահանման, դրանից հետո իրականացվում է ձեռքերի հիգիենիկ մշակում:

20. Ոտնաթաթերի կանխարգելիչ մշակում՝ միջոցի առատ քանակությամբ

(առնվազն 3 մլ) թրջված առանձին խծուծներով մանրամասն մշակվում են ոտնաթաթերը, յուրաքանչյուր ոտնաթաթը՝ առնվազն 1 րոպե:

21. Մաշկային ծածկույթների սանիտարական մշակում՝ անհրաժեշտ քանակի միջոցը լցնում են անձեռոցիկի վրա և մշակում մաշկային ծածկույթները՝ խոնավ վիճակում թողնելով առնվազն 30 վայրկյան, զգուշանում աչքերի մեջ թափվելուց: Մշակումը շարունակում են մինչև միջոցը չորանա: Կենսաբանական հեղուկներով, այդ թվում արյունով խիստ աղտոտվածությունը մաքրում են միջոցով ներծծված բամբակյա անձեռոցիկով կամ խծուծով, որից հետո ձեռքերը շփում են խոնավ անձեռոցիկով՝ մինչև ամբողջությամբ չորանալը, այնուհետև չոր անձեռոցիկով:

22. Միջոցով տոգորված անձեռոցիկների, մանրէազերծ անձեռոցիկների կիրառումը որպես հականեխիչ՝ օգտագործելուց առաջ բացվում է փաթեթավորումը, հանվում անձեռոցիկը, անմիջապես իրականացվում է մաշկային ծածկույթների մշակում:

23. Ձեռքերի հիգիենիկ մշակում (անձեռոցիկներ անհատական փաթեթավորմամբ, անձեռոցիկներ խմբային փաթեթավորմամբ)՝ ձեռքի չոր դաստակը (առանց նախապես օժառով և ջրով լվանալու) մանրամասն սրբվում է անձեռոցիկով, հավասարաչափ խոնավեցնելով, հատուկ ուշադրություն դարձնելով եղնգափոսերի և միջմատային տարածությունների մշակմանը: Մշակման տևողությունը 30 վայրկյան է:

24. Վիրահատական դաշտի, դոնորի արմնկափոսի մշակում (անձեռոցիկներ առանձնացված փաթեթավորումով)՝ մաշկը մեկ ուղղությամբ կրկնակի սրբվում է երկու անձեռոցիկներով: Մշակման ավարտից հետո պահաժամը 2 րոպե է: Վիրահատության նախօրեին պացիենտը ցնցուղ (լոգանք) է ընդունում, փոխում է ներքնաշորերը:

25. Ներարկման, այդ թվում պատվաստման և այլ միջամտություններից առաջ մաշկի ամբողջականության խախտման հետ կապված դաշտի մշակում՝ ներարկման վայրում մաշկը սրբվում է անձեռոցիկով մինչև լրիվ խոնավեցումը, մշակման ավարտից հետո պահաժամը 1 րոպե է:

26. Ոտնաթաթերի կանխարգելիչ մշակում (անձեռոցիկներ առանձնացված փաթեթավորմամբ, անձեռոցիկներ խմբային փաթեթավորմամբ)՝ մանրակրկիտ մշակում են յուրաքանչյուր ոտնաթաթի մաշկը առանձին անձեռոցիկներով, յուրաքանչյուր ոտնաթաթի մշակման տևողությունը առնվազն 1 րոպե է:

27. Մաշկային ծածկույթների սանիտարական մշակումն իրականացվում են միջոցով ներծծված անձեռոցիկով, մաշկը մեկ ուղղությամբ երկու անձեռոցիկներով կրկնակի սրբելով: Մաշկը թողնում են խոնավ՝ առնվազն 30 վայրկյան: Կենսաբանական հեղուկներով, այդ թվում արյունով խիստ աղտոտված մաշկային ծածկույթները մշակում են 2 փուլով: 1 փուլ՝ սկզբում միջոցով ներծծված անձեռոցիկով հեռացնում են աղտոտվածությունը, ապա չոր անձեռոցիկով մաքրում են: 2 փուլ՝ ձեռքերը շփում են խոնավ անձեռոցիկով՝ մինչև ամբողջությամբ խոնավանա, պահում են խոնավ վիճակում՝ առնվազն 30 վայրկյան:

28. Միջոցը կիրառման համար պատրաստի լուծույթի և միջոցով ներծծված 100×100-ից 300×300 մմ չափսերի անձեռոցիկների տեսքով կիրառվում է հրատապ ախտահանման նպատակով, շփման և ոռոգման եղանակներով, սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Մակերեսների մշակման ընթացքում ծախսվող միջոցի նորման՝

- 1) Միջոցով թրջված լաթով շփման կամ ոռոգման եղանակով՝ 30-40 մլ/մ²
- 2) 3-5 գ միջոցով ներծծված անձեռոցիկով մշակում են 0,1 մ² ոչ ավել մակերեսով մակերևույթ:
- 3) 5-10 գ միջոցով ներծծված անձեռոցիկով մշակում են 0,2 մ² ոչ ավել մակերեսով մակերևույթ:
- 4) 10 գ և ավելի քանակության միջոցով ներծծված անձեռոցիկով մշակում են 0,25 մ² ոչ ավել մակերեսով մակերևույթ:

29. Կենսաբանական հեղուկներով չաղտոտված մակերեսներ ու առարկաներ՝ մշակումն իրականացվում է շփման եղանակով՝ միջոցով տոգորված անձեռոցիկով կամ ոռոգման եղանակով՝ ձեռքի ցողացրիչով հետագա շփումով: Ոռոգման եղանակով մշակելիս՝ 30 սմ հեռավորությունից միջոցով թրջում են մակերեսը հավասարաչափ: Սպասում են նշված ազդեցության ժամանակի չափով, ախտահանումից հետո միջոցի մնացորդները հեռացնում են մակերեսից՝ լվանում են ջրով, շփում թաց գործվածքով կամ ոչ գործվածքային անձեռոցիկով, չորացնում են թանգիֆե, գործվածքային կամ ոչ գործվածքային անձեռոցիկներով: Ոռոգման եղանակով մշակվող առավելագույն մակերեսը կազմում է ընդհանուր մակերեսի 1/10-ը: Շփման եղանակով մշակումն

իրականացնում են մարդկանց ներկայությամբ, առանց անհատական պաշտպանության միջոցների: Ոռոգման և շփման եղանակներով միջոցը կիրառում են միանվազ:

30. Կենսաբանական հեղուկներով աղտոտված մակերեսներ՝ մշակումն իրականացվում է երկու փուլով.

1) 1 փուլ՝ մաքրում, մակերեսը ծածկում են միջոցով, աղտոտվածության եզրերից դեպի կենտրոն՝ կանխելով ցայտերի և ճողփյունների առաջացումը, սպասում պահանջվող ազդեցության ժամանակի չափով, միջոցով տոգորված գործվածքով (անձեռոցիկով) կամ միանվազ թղթե (գործվածքային) սրբիչներով մաքրում են վարակազերծված աղտոտվածությունը:

2) 2 փուլ՝ մաքրումից հետո մակերեսի ախտահանում, մակերեսը կրկնակի մշակում են միջոցով տոգորված գործվածքով (անձեռոցիկով), սպասում են պահանջվող ազդեցության ժամանակի չափով, ախտահանումից հետո միջոցի մնացորդները հեռացնում են մակերեսից՝ լվանում են ջրով, շփում թաց գործվածքով կամ ոչ գործվածքային անձեռոցիկներով, չորացնում են թանգիֆե, գործվածքային կամ ոչ գործվածքային անձեռոցիկներով:

31. Բժշկական արտադրատեսակների, սարքերի և սարքավորումների մակերեսները՝ շնչառական, անզգայացման-շնչառական, ախտորոշիչ, ատամնաբուժական սարքավորումների առանձին հանգույցները, բլոկները, մակերեսները, ինչպես նաև բժշկական սարքավորումների քանդվող մասերը և դետալները մշակում են շփման եղանակով: Ախտորոշիչ սարքավորումների տվիչները շփում են միջոցով տոգորված անձեռոցիկով, սպասում ազդեցության ժամանակի չափով, սույն հրահանգի աղյուսակ 1-ի առաջարկներին համապատասխան: Ազդեցության պահաժամից հետո մշակվող մակերեսը սրբում են մանրէազերծ, թանգիֆե անձեռոցիկով՝ չսպասելով չորանալուն:

32. Սրվակներ (ֆլակոններ) ներարկումից առաջ՝ սրվակների վերին հատվածը (ֆլակոնների կափարիչները) սրբվում են միջոցի մեջ թրջված մանրէազերծ բամբակե խծուծով կամ անհատական փաթեթավորմամբ՝ միջոցով տոգորված անձեռոցիկով: Մշակման ավարտից հետո պահաժամը 30 վայրկյան է:

33. Հիվանդի խնամքի պարագաներ, սանիտարատեխնիկական սարքավորման տարրեր՝ մշակում են միջոցով թրջած լաթով կամ անձեռոցիկով, շփման եղանակով: Խոշոր առարկաները (որի շփումը դժվար է) մշակում են ոռոգման եղանակով:

34. Կոշկեղեն, ռետինե և պոլիպրոպիլենային գորգեր, սպորտային գույք՝ մշակում են շփման կամ ոռոգման եղանակներով, ցողելով միջոցը մինչև մակերեսի լրիվ թրջվելը՝ առնվազն 3 րոպե:

35. Գրասենյակային տեխնիկա (հեռախոս, ստեղնաշար, մոնիտոր և այլն) շփում են միջոցով տոգորված անձեռոցիկով, պահում են մակերեսին 1 րոպե: Անհրաժեշտության դեպքում մակերեսը շփում են մաքուր, չոր անձեռոցիկներով:

Աղյուսակ 1

Անտիսեպտիկ միջոցով մակերեսների և օբյեկտների ախտահանման ռեժիմները

Մշակվող օբյեկտը	Վարակի տեսակը	Ազդեցության ժամանակը, րոպե	Մշակման եղանակը
Սենքերի մակերեսներ, կահավորանքի առարկաներ, սարքեր, սարքավորումներ, գործիքներ Հիվանդի խնամքի պարագաներ Սանիտարատեխնիկական սարքավորման տարրեր Տվիչներ և ախտորոշիչ սարքավորումներ Օպտիկական գործիքներ	Մանրէային (տուբերկուլոզից բացի), ՆՀՎ	1	Շփում կամ ոռոգում
	Սնկային ¹	3	Շփում
	Վիրուսային	3	Շփում
	Տուբերկուլոզ	5	Շփում

4. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

36. Միջոցը կիրառվում է միայն արտաքին օգտագործման նպատակով, ներքին ընդունման համար չի կիրառվում:

37. Չի լցվում վերքերի և լորձաթաղանթների վրա:

38. Խուսափում են աչքի մեջ, վնասված մաշկի վրա ընկնելուց:

39. Միջոցը կիրառվում է անմիջապես արտադրողի գործարանային փաթեթավորմամբ: Միջոցը ջրով կամ այլ լուծիչներով չի նոսրացվում, ինչպես նաև այլ միջոցների հետ չի խառնվում:

40. Մակերեսների և օբյեկտների մշակումն իրականացվում է պացիենտների ներկայությամբ: Միջոցն անվնաս է մանկական հաստատությունների, ինչպես նաև նորածնային բաժանմունքների օբյեկտների մշակման համար:

41. Միջոցը շուտ բռնկվում է: Բացառում են միջոցի շփումը բաց կրակի, ներառյալ տաքացնող սարքավորումների հետ, միջոցով աշխատելիս չեն ծխում:

42. Միջոցը պահպանվում է դեղամիջոցներից հեռու, երեխաներին անհասանելի վայրում:

43. Պիտանելիության ժամկետի լրանալուց հետո միջոցի կիրառումն արգելվում է:

44. Անձեռոցիկները նախատեսված են մեկանգամյա օգտագործման համար: Դրանց կրկնակի օգտագործումն արգելվում է: Անձեռոցիկների ոչ ճիշտ պահպանման հետևանքով չորացման դեպքում դրանց օգտագործումն արգելվում է:

5. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

45. Աչքերի մեջ լցվելու դեպքում՝ աչքերը լվանում են հոսող ջրի տակ և կաթեցնում 1-2 կաթիլ սուլֆացիլ նատրիումի 30% լուծույթ:

46. Մաշկի գրգռման կամ ցանի դեպքում միջոցի օգտագործումը դադարեցնում են: Ձեռքերը լվանում են օճառաջրով:

47. Շնչառական օրգանների գրգռման դեպքում ընդհատում են միջոցի հետ աշխատանքը, տուժածին անմիջապես դուրս են բերում մաքուր օդի կամ այլ տարածք, սենքն օդափոխում են, խմացնում են տաք ըմպելիք, բերանը և քիթը ողողում են ջրով, անհրաժեշտության դեպքում դիմում բժշկի:

48. Միջոցը ստամոքսի մեջ պատահական ընկնելու դեպքում սենյակային ջերմաստիճանի ջրով ստամոքսը լվանում են միջոցով և առաջացնում փսխում: Ապա տուժածին խմացնում են մի քանի բաժակ ջուր ադսորբենտի ավելացմամբ (10-15 հաբ մանրացված ակտիվացված ածուխ մեկ բաժակին):

6. ՓՈԽԱԴՐՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ

49. Հեղուկ վիճակում գտնվող միջոցի փոխադրումն իրականացվում է ցամաքային և ջրային տրանսպորտով՝ դյուրավառ հեղուկների փոխադրման կանոնների համաձայն, որոնք ապահովում են միջոցի և տարայի չվնասվելը:

50. Անձեռոցիկների ձևով միջոցի փոխադրումն իրականացվում է տրանսպորտի բոլոր տեսակներով, որոնք ապահովում են մթնոլորտային տեղումներից և արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանություն, բեռների փոխադրման կանոնների համաձայն, որոնք ապահովում են միջոցի և տարայի չվնասվելը:

51. Վթարային իրավիճակում, միջոցի մեծ քանակության պատահական արտահոսքի դեպքում թափված տեղում լցնում են ավազ, հող կամ սիլիկագել (չեն կիրառվում դյուրավառ նյութեր, օրինակ տաշեղներ, թեփ) ապա հավաքում են կափարիչով տարաների մեջ հետագա օգտահանման նպատակով: Մնացորդները լվանում են մեծ քանակի ջրով: Միջոցի մեծ քանակի մաքրման ընթացքում կիրառում են անհատական պաշտպանության միջոցներ՝ հագուստ, ճտքակոշիկներ, ռետինե կամ պոլիէթիլենային ձեռնոցներ, ունիվերսալ РПГ-67 կամ «А» պատրոնով РУ-60М շնչադիմակներ կամ արտադրական հակազագեր: Աղտոտված տարածքը մաքրելուց հետո լվանում են մեծ քանակի ջրով:

52. Վթարային իրավիճակներում փաթեթավորման ամբողջականության խախտման դեպքում անձեռոցիկները հավաքում և օգտահանում են:

53. Արտաքին միջավայրի պաշտպանության միջոցառումներ՝ չի թույլատրվում չնոսրացված միջոցի թափանցումը մակերեսային և ստորգետնյա աղբյուրներ, կոյուղու մեջ: Նոսրացումն իրականացվում է ջրի մեծ քանակությամբ:

54. Հեղուկ վիճակում գտնվող միջոցը պահպանվում է փակ օդափոխվող պահեստային կառուցահատվածներում, արտադրողի փակ փաթեթավորմամբ՝ դյուրավառ հեղուկների պահպանման պայմաններին համապատասխան՝ դեղորայքից առանձին, երեխաներից հեռու վայրերում, 5°C -ից մինչև $+30^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում, տաքացուցիչ սարքերից (առնվազն 1 մ) և արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված տեղերում:

55. Անձեռոցիկների տեսքով միջոցի պահպանումն իրականացվում է փակ, չոր օդափոխվող պահեստային կառուցահատվածներում, պաշտպանված խոնավությունից և արևի ճառագայթներից, տաքացուցիչ սարքերից և բաց կրակից հեռու՝ 5°C -ից մինչև $+30^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում:

56. Արտադրողի կողմից փաթեթավորված վիճակում միջոցի պահպանման ժամկետը (այդ թվում տարան բացելուց հետո) 5 տարի է՝ հերմետիկ փաթեթավորման և պահպանման պայմանների պահպանման դեպքում:

7. ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆԱԼԻՏԻԿ ՄԵԹՈԴՆԵՐ

57. Կիրառման համար պատրաստի հեղուկի կամ անձեռոցիկների ձևով միջոցի որակի հսկման ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 2,3-ում:

Աղյուսակ 2

Միջոցի որակի ցուցանիշներ

(թողարկման ձևը՝ օգտագործման համար պատրաստի հեղուկ)

Հ/Հ	Ցուցանիշ	Նորմա
1	Արտաքին տեսք, գույն և հոտ	Անգույնից մինչև բաց դեղին գույնի, սպիրտի բնորոշ հոտով կամ բուրանյութի հոտով կամ առանց բուրանյութի հոտի թափանցիկ հեղուկ
2	Խտությունը 20°C ջերմաստիճանում, գ/սմ ³	1,000±0,02
3	Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշ (pH)	6,5±1,0
4	Օկտենիդինի դիհիդրոքլորիդի զանգվածային բաժին, %	0,1±0,1
5	2-ֆենօքսիէթանոլի զանգվածային բաժին, %	2,0±0,2

Աղյուսակ 3

Միջոցի որակի ցուցանիշներ

(թողարկման ձևը՝ միջոցով թրջված անձեռոցիկ)

Հ/Հ	Ցուցանիշ	Նորմա
-----	----------	-------

1	Արտաքին տեսք	Ոչ գործվածքային նյութից խոնավ անձեռոցիկ
2	Հոտ	Առանց հոտի կամ բուրանյութի հոտով
3	Անձեռոցիկում տոգորված լուծույթի զանգվածը, գ	10,0±1,0 5,0±0,5 1,1±0,1
4	Օկտենիդինի դիհիդրոքլորիդի զանգվածային բաժին, %	0,1±0,01
5	2-ֆենօքսիթթանոլի զանգվածային բաժինը, %	2,0±0,2

58. Միջոցի արտաքին տեսքն ու գույնը որոշում են ակնադիտորեն, հոտն որոշում են օրգանոլեպտիկ մեթոդով՝ ըստ ԳՕՍՏ 29188.0-2014: Դրա համար 30-32 մմ ներքին տրամագծով անգույն ապակուց փորձանոթի մեջ լցնում են միջոց մինչև կեսը և դիտում են արտացոլված կամ անցողիկ լույսի տակ:

59. Անձեռոցիկի արտաքին տեսքն ու գույնը որոշում են ակնադիտորեն, հոտը որոշում են օրգանոլեպտիկ մեթոդով:

60. Տոգորված լուծույթի զանգվածի որոշում:

1) Սարքավորումներ, ռեակտիվներ և նյութեր.

ա. ընդհանուր նշանակության 2-րդ դասի լաբորատոր կշեռք՝ ԳՕՍՏ 53228 առավելագույնը 200 գ քաշի որոշմամբ

բ. բյուքս CB 34/12 ըստ ԳՕՍՏ 25336-82

գ. ունելի

դ. $50 \pm 5^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի միջակայքի պահպանումն ապահովող էլեկտրական չորացնող պահարան:

2) Փորձարկման իրականացում.

ա. Փաթեթը բացելուց անմիջապես հետո անձեռոցիկն ունելիով հանում են տուփից և տեղադրում նախապես կշռած բյուքսի մեջ, որոշում են անձեռոցիկով բյուքսի զանգվածը: Անձեռոցիկն օդում, ապա նաև չորացնող պահարանում՝ $50 \pm 5^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի պայմաններում չորացնում են մինչև մշտական զանգված և կշռում են նույն բյուքսի մեջ: Կշռման ճշգրտությունը՝ մինչև 0.01 գ:

բ. Տոգորված լուծույթի զանգվածը (M) որոշում են բանաձևով.

$$M=m_1 - m_2 , \text{ որտեղ}$$

M – տոգորված լուծույթի զանգվածն է, գ,

m_1 – չորացրած անձեռոցիկով բյուքսի զանգվածն է, գ,

m_2 – չորացրած անձեռոցիկով բյուքսի զանգվածն է, գ:

Որպես հետազոտության արդյունք ընդունում են 5 անձեռոցիկների փորձարկումների արդյունքների միջինը, որոնց միջև հարաբերական տարբերությունը չի գերազանցում թույլատրելի տարբերությունը՝ 2%:

61. Խտությունը 20°C ջերմաստիճանում որոշում են համաձայն ԳՕՍՏ 18995.1.

62. Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշի (pH) որոշումն իրականացվում է պոտենցիոմետրիկ մեթոդով՝ ըստ ԳՕՍՏ 32385-2013-ի կամ ստորև ներկայացված մեթոդաբանությամբ:

1) Չափման միջոցներ, ռեակտիվներ և լուծույթներ.

ա. ցանկացած մակնիշի pH-մետր՝ 0.1 չգերազանցող սխալանքով,

բ. 50 սմ^3 տարողությամբ ապակե բաժակ՝ ըստ ԳՕՍՏ 25336:

2) Փորձարկման իրականացում՝ բաժակի մեջ լցնում են միջոց ($30\text{--}40 \text{ սմ}^3$ ծավալով) և pH-մետրով չափում են pH՝ համաձայն հրահանգի:

63. Օկտենիդինի դիհիդրոքլորիդի զանգվածային բաժնի որոշումն իրականացվում է հակադարձ փուլային բարձրարդյունավետ քրոմատոգրաֆիայի մեթոդով՝ ՈՒՄ-դետեկտորի և քրոմատոգրաֆիայի իզոկրատիկ ռեժիմի կիրառմամբ՝ օգտագործելով ներքին էտալոնի մեթոդը: Կիրառվում է բացարձակ աստիճանավորում:

1) Սարքավորումներ, ռեակտիվներ և նյութեր՝

ա. հեղուկային քրոմատոգրաֆ՝ հագեցած ՈՒՄ-դետեկտորով, 10 մկլ չափաբաժին օղակներով ինժեկտոր, անհատական համակարգչի վրա քրոմատոգրաֆիկ տվյալների հավաքման և մշակման համակարգ:

բ. Քրոմատոգրաֆիկ սյուն ($250 \times 4 \text{ մմ}$)՝ լցված նուկլեոսիլ C18 (10 մկմ) սորբենտով:

գ. լաբորատոր կշեռք 2-րդ դասի ճշգրտության, 200 գ կշռման առավելագույն սահմանով,

դ. թաղանթային ֆիլտր Սատորիուս 100-N-25, ծակոտիների չափսը՝ $0,45 \text{ մկմ}$,

ե. չափիչ կոլբա 100 սմ^3 տարողությամբ ըստ ԳՕՍՏ 1770-74,

զ. կաթոցիկներ 10 սմ^3 տարողությամբ ըստ ԳՕՍՏ 29169,

է. օկտենիդինի դիհիդրոքլորիդ՝ ստանդարտ նմուշ (CO), CAS 70775-75-6 (առնվազն՝ 98%)՝ անալիտիկ ստանդարտ,

ը. դիբութիլֆթալատ մ.հ.հ. ըստ USՊ ՏՈՒ ԿՕՄՊ 2-213-10 (մ. դ. առնվազն՝ 99%), նյութ՝ ներքին էտալոն,

ժ. ացետոնիտրիլ ԲԱՀՔ դասակարգման ըստ ՏՈՒ 6-09-3534,

ի. ֆոսֆորական թթու ք.մ. ըստ ԳՕՍՏ 6552-80, 1% ջրային լուծույթ,

լ. Կրկնակի թորած ջուր:

2) Հետազոտության նախապատրաստում:

ա. Էյուենտի պատրաստում

1000 մլ էյուենտի լուծույթի պատրաստման համար 720 մլ ացետոնիտրիլին ավելացվում է 280 մլ 1%-անոց ֆոսֆորական թթու, լուծույթը խառնվում է: Օգտագործումից առաջ էյուենտից հեռացվում են գազերը:

բ. Հիմնական աստիճանավորված խառնուրդի պատրաստումը՝ 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ լցնում են 0,1 գ օկտենիդինի դիհիդրոքլորիդ (CO)՝ կշռված մինչև չորրորդ տասնորդական նիշ ճշգրտությամբ, ապա կաթոցիկի օգնությամբ չափում են 10 սմ³ հիմնական աստիճանավորված խառնուրդ, լուծում 50 մլ էյուենտի մեջ և ավելացնում էյուենտ՝ մինչև նիշը:

բ. Ներքին էտալոնով հիմնական աստիճանավորված խառնուրդի պատրաստումը՝ 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ լցնում են 0,1 գ դիբութիլֆթալատ՝ (նյութը՝ ներքին էտալոն)՝ կշռված մինչև չորրորդ տասնորդական նիշ ճշգրտությամբ, ապա կաթոցիկի օգնությամբ չափում են 10 սմ³ հիմնական աստիճանավորված խառնուրդ և ավելացնում էյուենտ՝ մինչև նիշը: Ստացված լուծույթը խառնելուց հետո ֆիլտրում են թաղաթային ֆիլտրով:

3) Փորձարկման իրականացում.

ա. Քրոմատոգրաֆման պայմանները՝ Էյուենտ-ացետոնիտրիլ և 0,1%-անոց ֆոսֆորական թթվի 72:28 ծավալային հարաբերակցություն, Էյուենտի հոսքի արագությունը՝ 2մլ/րոպե, ալիքի երկարությունը՝ 278 նմ, չափաբաժնի ծավալը՝ 10 մկլ, օկտենիդինի դիհիդրոքլորիդի օրինակելի պահաժամը՝ 1,97 ռոպե, դիբութիլֆթալատինը՝ 4,47 ռոպե:

Քրոմատոգրաֆման պայմանները կարող են փոփոխվել՝ որոշվող բաղադրիչների առավել արդյունավետ տարանջատման նպատակով:

4) Աստիճանավորման խառնուրդը քրոմատոգրաֆում են առնվազն երեք անգամ: Որոշվում են պահաժամը, օկտենիդինի դիհիդրոքլորիդի և դիբութիլֆթալատի (նյութը՝ ներքին էտալոն) քրոմատոգրաֆիկ պիկերը: Որպես հետազոտության արդյունք ընդունվում է միջին ցուցանիշը:

Բանաձևով հաշվում են աստիճանավորման հարաբերական գործակիցը (K):

$$K = \frac{M \cdot S_{\text{էտ}}}{M_{\text{էտ}} \cdot S \cdot 10}, (1), \text{ որտեղ}$$

S և $S_{\text{էտ}}$ ՝ աստիճանավորման աշխատանքային լուծույթում օկտենիդինի դիհիդրոքլորիդի և դիբութիլֆթալատի (նյութը՝ ներքին էտալոն) քրոմատոգրաֆիկ պիկերի մակերեսներն են

M և $M_{\text{էտ}}$ ՝ աստիճանավորման աշխատանքային լուծույթում օկտենիդինի դիհիդրոքլորիդի և դիբութիլֆթալատի զանգվածն է, գ

Հետազոտության իրականացում՝ 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ լցնում են 10 գ միջոց և 0,1 գ դիբութիլֆթալատ՝ կշռված մինչև չորրորդ տասնորդական նիշ ճշգրտությամբ, ավելացնում են էլյուենտ՝ մինչև նիշը: Ստացված լուծույթը խառնելուց հետո ֆիլտրում են թաղաթային ֆիլտրով, քրոմատոգրաֆում են առնվազն երեք անգամ: Որպես հետազոտության արդյունք ընդունվում է միջին ցուցանիշը: Ստացված քրոմատոգրերով հաշվում են հետազոտվող նմուշում օկտենիդինի դիհիդրոքլորիդի և դիբութիլֆթալատի (նյութը՝ ներքին էտալոն) քրոմատոգրաֆիկ պիկերի մակերեսները:

5) Արդյունքների մշակում՝ օկտենիդինի դիհիդրոքլորիդի զանգվածային բաժինը (X , %) հաշվում են հետևյալ բանաձևով:

$$X = \frac{K \cdot S \cdot M_{\text{էտ}} \cdot P}{S_{\text{էտ}} \cdot m \cdot 100} \cdot 100, (2) \text{ որտեղ՝}$$

S և $S_{\text{էտ}}$ ՝ հետազոտվող նմուշում օկտենիդինի դիհիդրոքլորիդի և դիբութիլֆթալատի քրոմատոգրաֆիկ պիկերի մակերեսն է

$M_{\text{էտ}}$ ՝ աստիճանավորման աշխատանքային լուծույթում դիբութիլֆթալատի զանգվածն է, գ;

m ՝ միջոցի զանգվածն է, գ;

K ՝ օկտենիդինի դիհիդրոքլորիդի աստիճանավորման հարաբերական գործակիցն է

P՝ օկտենիդին դիհիդրոքլորիդի ստարդարտ նմուշում հիմնական նյութի պարունակությունն է, %;

K – աստիճանավորման հարաբերական գործակիցն է օկտենիդին դիհիդրոքլորիդի համար՝ հաշվարկված բանաձևով (1):

Որպես հետազոտության արդյունք ընդունում են երկու զուգահեռ որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև հարաբերական տարբերությունը չի գերազանցում թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 10%: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 4,0\%$ ՝ $p=0.95$ հավանականության վստահելի միջակայքում:

64. 2-Ֆենօկսիէթանոլի զանգվածային բաժինը որոշվում է հակադարձ փուլային հեղուկային բարձրարդյունավետ քրոմատոգրաֆիայի մեթոդով՝ ՌԻՄ-դետեկտորի և քրոմատոգրաֆիայի իզոկրատիկ ռեժիմի կիրառմամբ՝ օգտագործելով ներքին էտալոնի մեթոդը: Կիրառվում է բացարձակ աստիճանավորում:

1) Սարքավորումներ, ռեակտիվներ և նյութեր՝

ա. հեղուկային քրոմատոգրաֆ՝ հագեցած ՌԻՄ-դետեկտորով, 10 մկլ չափաբաժին օղակներով ինժեկտոր, անհատական համակարգչի վրա քրոմատոգրաֆիկ տվյալների հավաքման և մշակման համակարգ:

բ. քրոմատոգրաֆիկ սյուն (250×4մմ)՝ լցված նուկլեոսիլ C₁₈ (10 մկմ) սորբենտով:

գ. լաբորատոր կշեռք 2-րդ դասի ճշգրտության, 200 գ կշռման առավելագույն սահմանով

դ. թաղանթային ֆիլտր Սատորիուս 100-N-25, ծակոտիների չափսը՝ 0,45 մկմ,

ե. չափիչ կոլբա 100 սմ³ տարողությամբ ըստ ԳՕՍՏ 1770-74,

զ. կաթոցիկներ 5 սմ³ տարողությամբ ըստ ԳՕՍՏ 29169-91,

է. 2-Ֆենօքսիէթանոլ՝ CAS 122-99-6 (առնվազն՝ 99%)՝ անալիտիկ ստանդարտ,

ը. դիբութիլֆտալատ մ.հ.հ. ըստ ՍՏՊ ՏՈՒ ԿՕՄՊ 2-213-10 (մ. դ. առնվազն՝ 99%), նյութ՝ ներքին էտալոն,

ժ. ացետոնիտրիլ ըստ ԲԱՀՔ դասակարգման ՏՈՒ 6-09-3534,

ի. ֆոսֆորական թթու ք.մ. ըստ ԳՕՍՏ 6552-80, 1% ջրային լուծույթ,

լ. Կրկնակի թորած ջուր:

2) Հետազոտության նախապատրաստում:

Էլյուենտի և աստիճանավորման խառնուրդների պատրաստում

ա. Էյուենտի պատրաստում՝ 1000 մլ էյուենտի լուծույթի պատրաստման համար 680 մլ ացետոնիտրիլին ավելացվում է 1%-անոց ֆոսֆորական թթու մինչև 1000 մլ, լուծույթը խառնվում է: Օգտագործումից առաջ էյուենտից հեռացվում են գազերը:

բ. Հիմնական աստիճանավորված խառնուրդի պատրաստումը՝ 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ լցնում են 0,1 գ 2-ֆենօքսիթթանոլ՝ կշռված մինչև չորրորդ տասնորդական նիշ ճշգրտությամբ, լուծում 50 մլ էյուենտի մեջ և ավելացնում էյուենտ՝ մինչև նիշը:

գ. Ներքին էտալոնով հիմնական աստիճանավորված խառնուրդի պատրաստումը՝ 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ լցնում են 0,2 գ դիբութիլթթալատ՝ (նյութը՝ ներքին էտալոն)՝ կշռված մինչև չորրորդ տասնորդական նիշ ճշգրտությամբ, ապա կաթոցիկի օգնությամբ չափում են 5 սմ³ հիմնական աստիճանավորված խառնուրդ և ավելացնում էյուենտ՝ մինչև նիշը: Ստացված լուծույթը խառնելուց հետո ֆիլտրում են թաղաթային ֆիլտրով և 10 մլլ աստիճանավորման աշխատանքային լուծույթ ներմուծում են քրոմատոգրաֆի մեջ: Քրոմատոգրաֆում են առնվազն երեք անգամ, որպես հետազոտության արդյունք ընդունվում է միջին ցուցանիշը:

Ստացված քրոմատոգրերով հաշվում են հետազոտվող նմուշում 2-ֆենօքսիթթանոլի և դիբութիլթթալատի (նյութը՝ ներքին էտալոն) քրոմատոգրաֆիկ պիկերի մակերեսները, հաշվում են դիբութիլթթալատի աստիճանավորման գործակիցը:

3) Քրոմատոգրաֆման պայմանները՝ էյուենտ-ացետոնիտրիլ և 0,1%-անոց ֆոսֆորական թթվի 68:32 ծավալային հարաբերակցություն, էյուենտի հոսքի արագությունը 1 մլ/րոպե է, ալիքի երկարությունը՝ 278 նմ, չափաբաժնի ծավալը՝ 10 մլլ, 2-ֆենօքսիթթանոլի օրինակելի պահաժամը՝ 1,97 րոպե, դիբութիլթթալատինը՝ 4,47 րոպե:

Քրոմատոգրաֆման պայմանները կարող են փոփոխվել՝ որոշվող բաղադրիչների առավել արդյունավետ տարանջատման նպատակով:

4) Հետազոտության իրականացում՝ 100 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ լցնում են 5 գ միջոց և 0,1 գ դիբութիլթթալատ՝ կշռված մինչև չորրորդ տասնորդական նիշ ճշգրտությամբ, ավելացնում են էյուենտ՝ մինչև նիշը: Ստացված լուծույթը խառնելուց հետո ֆիլտրում են թաղաթային ֆիլտրով և 10 մլլ աստիճանավորման աշխատանքային լուծույթ ներմուծում քրոմատոգրաֆի մեջ: Քրոմատոգրաֆում են առնվազն երեք անգամ,

որպես հետազոտության արդյունք ընդունվում է միջին ցուցանիշը: Ստացված քրոմատոգրերով հաշվում են հետազոտվող նմուշում 2-ֆենօքսիթթանոլի և դիբութիլֆթալատի (նյութը՝ ներքին էտալոն) քրոմատոգրաֆիկ պիկերի մակերեսները:

5) Արդյունքների մշակում՝ 2-ֆենօքսիթթանոլի զանգվածային բաժինը միջոցում (X, %) որոշվում է հետևյալ բանաձևով

$$X = \frac{k \cdot S \cdot M_{\text{էտ}}}{S_{\text{էտ}} \cdot m} 100, \text{ որտեղ}$$

S և $S_{\text{էտ}}$ ՝ 2-ֆենօքսիթթանոլի և դիբութիլֆթալատի քրոմատոգրաֆիկ պիկի մակերեսն է հետազոտվող նմուշում

$M_{\text{էտ}}$ ՝ հետազոտվող նմուշում դիբութիլֆթալատի զանգվածն է, գ

m՝ միջոցի զանգվածն է, գ;

K՝ 2-ֆենօքսիթթանոլի հարաբերական աստիճանավորման գործակիցն է;

K – աստիճանավորման հարաբերական ցուցանիշը հաշվարկվում է բանաձևով.

$$K = \frac{M \cdot S_{\text{էտ}}}{M_{\text{էտ}} \cdot S \cdot 10}, (1), \text{ որտեղ}$$

S և $S_{\text{էտ}}$ ՝ աստիճանավորման աշխատանքային լուծույթում 2-ֆենօքսիթթանոլի և դիբութիլֆթալատի (նյութ՝ ներքին էտալոն) քրոմատոգրաֆիկ պիկերի մակերեսն է

M և $M_{\text{էտ}}$ ՝ աստիճանավորման աշխատանքային լուծույթում 2-ֆենօքսիթթանոլի և դիբութիլֆթալատի (նյութ՝ ներքին էտալոն) զանգվածն է, գ;

Որպես հետազոտության արդյունք ընդունում են երկու զուգահեռ որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև հարաբերական տարբերությունը չի գերազանցում թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 10%: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 4,0\%$ ՝ $p=0.95$ հավանականության վստահելի միջակայքում: